

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարինյ համար 12 ֆր.
Տարեկան 120 ֆր.
Վճարմանը 6 ֆր.

Վեց րեկույի համար 3 ֆր.
Վճարմանը 1.50 ֆր.

Վաճառքի համար 3 ֆր.
Վճարմանը 1.50 ֆր.

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ՉԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԼՐՈՎԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԻՔԸՍՈՒԹԻ ԵՒ ԶԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և գրամ գրելի
հարկազուրկանու հաս-
ցիին.

Родакпия на вестникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Արևաստանական համար
ձեռքի
(20 ՍԵՆՏԻՄ)

Պուշկարինյ համար
ձեռքի
= 15 ՍԵՆՏԻՄ =

Կրեթիմեֆ և յեժ ՏՐՈՒՐ

«ՇԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՀՐԱԻԵՐ

ՊՈԼԿԱՐԻՈՑ ՀԱՅ ՌԵՍՈՒՅՑՆԵՐՈՒՆ

ՈՒՍՈՒՅՑՈՒՆԻ ԵՐՈՒՆ

Ազնիւ պաշտօնակիցներ.

Սեռունդներ պատրաստել, ա.
նա ամեն ուսուցչի նուիրական և
բարձր պաշտօնը, և մանաւանդ
նայ ուսուցչի, որ պարտ է ներկայ
անկ ճշմարտութիւն մէջ պէտք է
գիտնուի իր պատրաստելիք սե-
րունդը օժտել արտակարգ բա-
րոյական ուժով մը և մտաւոր
հիմնական կարողութիւններով:

Հայ ուսուցչութիւնը մինչև
հիմա իր վրայ գրած յայտնաբեր
արդարացուցած է կամ կրնայ
արդարացնել: Կնակական բար ոչ
ինչպէս կրնայ բարոյական ուժ
ու կորով ներշնչել իր հասուցած
անբուժելի, երբ ինք զրկուած է
անկ. Եստմբ իր անհոգութեամբ
և մաս մը ալ ժողովրդին ագի-
տութեամբ: Ինչպէս կրնայ լուրջ
և յաջող մտածան հակամէտ
մտաւորական կարողութիւններով
զարգացնել իր սանին միտքը:

Երբ ամեն ազգի մէջ, սմեն նա-
խակ թարսնեան համար ան-
հրաժեշտ եղող ամենատարա-
կան պէտքերուն իսկ գոհացում
չէ տրուած ալ, չէ ծրագրերն-
քու և դաստանդութեան մէ
թատնրու միտքնակութիւն:

Պէտք է համբերել որ հայ
վարժարաններու այս խառնակ
վիճակը շարունակէ. չի փու-
թանք ալ իս, հայ ուսուցչներու,
մեր պաշտօնին իբրև գիտակից
անձեր, միանալ, կազմակերպ
ու իր ցործել պարտն կրթական
շահերը պաշտպանելու որոշ մը-
տող լուծեամբ: Մեր դրացի
պուլկար ազգի ն գեւորիչ օրի-
նակներէն չենք կրնար օգտուել:

Անոք ունենալով կառավարու-
թիւն մը և կրթական որոշ օ-
րէնքներ, գարձեալ աւելորդ շեն
համարած ուսուցչական միութիւն
մը կազմելու ի սկզբան տկար ու-
ժերով, ապա հետզհետէ ստուա-

բացած— և ուսուցչութիւնը բուն
իսկ իր կոչման արժանի մակար-
դակի մը հասնել և անոր վարկն
ու պատիւը անպատշաճ կամայա-
կանութեանց դէմ պաշտպանել:
Ինչո՞ւ միեւնոյնը մենք չընենք,
քանի որ կը զգանք թէ զմեզ,
ուսուցչներու—սյսինքն ազգին
ամենէն կարեւոր գործող ուժը—
պաշտպանող ոչ ոք կայ: Ինչո՞ւ
իբրև ճշմարիտ առաջնորդներ
ժողովրդեան մենք իսկ մեր ձեռ-
քով չի գանք պաշտպանել թէ
մենք հաստատ գիտակցութիւնն
ունինք մեր ստանձնած գործին:

Ուրեմն, ազնիւ հայ պաշտօնա-
կիցներ, Վառնայի Ազգ. վար-
ժարաններու Ուսուցչական մար-
մինն կուգայ խնդրել, յանուն հայ
ազգին շահերուն, Պուլկարինյ բո-
լոր հայ ուսուցչներէն և ուսուց-
չուհիներէն որպէսզի չի փորա-
նին «յսպիսի վեճ գործի մը նախ
ձեռնարկ ըլլալու»: Հայ մամուլը
բնականաբար շատ սիրով իր է-
ջերը պիտի բանայ մեր իւրա-
քանչիւրին կողմէ այդ մասին
յայտնուած գաղափարներն ու
կարծիքները հիւրընկալելու և
պիտի փութայ ի հարկին սոյն
կարեւոր ձեռնարկը յառաջ մղե-
լու:

Բնութի, առանց վերջնական
բան մը բռած ըլլալու յաւակնու-
թեան և ստանց մտնրամանու-
թեանց մտնելու, որպէսզի մեր
յարգող պաշտօնակիցները բոլոր-
ովին անորոշ և տարտամ գրու-
թեան մը չի մտնենք, կուզանք
«միութեան» իբրև հիմ շորս կա-
րեւոր կէտեր իրենց ու շարուն-
թեան յանձնել:

- 1. Բոլոր Պուլկարինյ վար-
ժարաններու ծրագրիներու միու-
թիւնակութիւն:
2. Պաշտօնի կոչումը ուսուցչի-
նրու կողմէ որոշ պահանջումներ,
վարժարանին մէջ իրենց անհրա-
ժեշտ բարոյական հեղինակու-
թիւնը վայելելու մասին:
3. Ուսուցչական իրաւունքներու
և շահերու պաշտպանութիւն:
4. Ուսուցչական արժանապա-
տուութեան բարձրացում հասա-

րակութեան առիւծ: ()
Յուսով ենք որ դուք եւս, այն-
քան նախանձախնայ իր ալն գոր-
ծին որքան մենք, պիտի փու-
թանք ալ ան թեւ ձեր խորհրդի
ձեռնարկներն ու գիտակցութիւն-
ները մեզ հաղորդել:

Կր խոստանաք, որք ու ա.
նանք ուսուցչի նախ պատաս-
խանները, անոնց «միտքով»
հրատարակել մամուլի մէջ և
պահէնք ուղարկել ձեզ և յե-
տոյ պատգամաւորական ժողովի
մը գումարման թուակտնը և տե-
ղը Պուլկարինյ ուսուցչաց հաւա-
նութեան նիւթարկել:

Նկատի ունենալով մամանակի
սղութիւնը, կը յուսանք որ առ
առաւելն մինչև յուլիսի վերջ
պիտի բարեհաճիք պատասխանել
նեզկայ հրաւերին:

Ընդունեցէք, ազնիւ պաշտօ-
նակիցներ, մեր անկեղծ յար-
գանքները:

Ուսուցչական մարմին
Ազգ. երկեսս վարժարանաց
Վառնայի

Յ. Կ.
Այն պաշտօնակիցները, որոնց
հասցէն մեզ անձանթով ըլլալով
մասնաւոր կոչ չեն ընդունած,
կը խնդրենք որ ներկայս իբր
այն նկատեն:

Նոյն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձեռնարկի 7/20 յուլիս 1902

Չքաղումի բերումով օրը օրին չը
կրցի «Շարժում» ընթերցողներուն
ուրախալի լուրեր տալու: Թուէս 7
օր առաջ յեղափոխականներ քաղաքիս
ամենամեծ հրապարակներէն միոյն
վրայ տեսողի ենթարկած են նշանա-
ւոր մասնիչ Մաքսուս Աւրանեան:
Կարեւոր կը համարեմ փոխանակ ժո-
ղովրդի մէջ տարածախումբ լուրե-
րուն յենլու ականատեսի մը բերնէն
պատմուածը գրել:

() Ծ. Ս. Մ. Իր կարծիքով Վառնա-
յի ուսուցչական խումբը մոռացել է
չենլու անպատրաստ ուսուցչներին
հետ պաշտօն չը վարելու կէտը:

Երեքշաբթի առաւօտ երբ քաղա-
քի վրայ պտոյս մը կատարելէ յե-
տոյ կը վերադառնայի՝ ճամբաս դէ-
պի Ֆրանկաց թաղը ուղղելով, Հանի
Սթա փողոցը մտայ, Արճանակի
շորս հարուածներու պայթիւնը եւ
հակայ մարմնով անձի մը գիտին գր-
տորվիլը յանկարծակի եղաւ: Վի ա-
ւորուածի վայնասուներ, ախ... ախ...
պոռալը, ժողովրդի բոպէապէս հաւա-
քու մը, առնորու պատշգամի երէն կի-
նորու լալկան կոճը, խանութներու
պաշտօնեաներու դէպի եղելութեան
վայրը վազելը, «բունցէք մարդաս-
պանը» կոչերը, միւս կողմէ երիտա-
սարդի մը ատրճանակը ձեռքը յան-
դուգն վազքը եւ իր ետեւէն գացող
պաշտպան ընկերոջ նոյնպէս ատրճա-
նակը ձեռքը աւրեցիլը բարձրաձայն
կոչը, փողոցի կողմերէն հարեւաւոր
հոգիներու դէպ ետ ետ խոնուիլը ան-
միջակուն եղան:

Ինքզինքս կորսնցուցած փութացի
ուրիշ փողոցով մը տեսնել երկու պա-
ղարիւններու յանդուգն հերոսական
գիմարտութիւնը ամբողջին դէմ: Դէ-
պի առաջ երթալուն, առաւօտեան
դէմ կաթնափառաններու, բանջարե-
ղէն ձախողներուն, հրէա արհեստա-
ւորներու տեսողութեանը բոնելու
շանքը եւ անոնցմէ սմանց սարսա-
փահար կոնակի վրայ գլտորուիլը
պտոյ կանչելը աննկարագրելի է եւ
մերթ ընդ մերթ երկու երիտասարդ
ներուն դէպի ետ դառնալով ժողովրդ
դի վրայ զէնք պարպելու փորձը ճըշ-
մարիտ արդուութեան օրինակ մը կր-
նայ եղած ըլլալ:

Այլեւս չէի կրնար հետեւել, տը-
ղիքը կորսնցուցած էի:

Կոչուած ականատես բարեկամս
կանգ առաւ: Խօսակցութիւնը եւ
շարունակեցի: Ինչ կըսես, Իզմիրի
մէջ յեղափոխականներ կան:

—Չարմանալի հարցում, կը պա-
տասխանէ բարեկամս: Ես կրնամ ձեզ
հաւատացնել որ քաղաքիս մէջ բա-
ւական զօրաւոր կազմակերպութիւն
մը կայ:

—Չօրաւոր, քանի հայ կայ, որ
քանի յեղափոխական ըլլայ:

—Բարեկամ, քանակը ինչ կը նա-
յիս, որակը սես: Ժանաւանդ ինչպէս
վերջիս ստոյգ ազգիւրէ կիմանամ որ
յեղափոխականները նոր չէ: այլ
հինգ տարիէ ի վեր հաստատուած են
քաղաքիս մէջ:

—Բարեկամ, կըսեմ, զարմանքս
զսպելով, ինչպէս այս երկար հինգ
տարիներու շրջանի մէջ ո եւ է գոր-
ծունէութիւն կամ ձայն չեն ունե-
ցալ: Ոստակիցս այս անգամ աւելի
զայրացած քան յուզուած—տղայորէն

կը մտածես կըտէ. հինգ տարուան շրջանի մէջ կրնայ որոշ ծրագիրներ յորինուին, անշուշտ Կաշակցականներ լաւ ի տես առած են այս գործունէութեան հսկայ դաշտը ներկի լու համար, բայց ինչպէս ըսի, ներքին գաղտնիքներ, ծրագիրներ չը գիտնալու համար շատ չը քննադատենք. քննադատելը շատ դիւրին է իսկ գործելը դժուար. կը հարցնեմ քեզի, եթէ գործունէութիւն կուզէիր անցած հինգ տարիներու շրջանին մէջ ինչ զոհողութիւն բերիր, քանի՞ մարդ տուիր. երբ կը խօսես ինքզինքդ կը քննադատես. ես ամօթխած այս արդարացի փաստերուն հանդէպ, չը կրցի պատասխանել...

Բարեկամիս մեկնումն յետոյ ինչեր չը ինչիցի գրասեղանիս առջև մտախոհ. ինչեր չըսին այն ժողովրդի զաւակ յեղափոխականներուն. այն օրինքոր անուանարկութիւնները, զապրելի զրպարտութիւնները գող, աւազակ խաբէրայ, ժողովրդի դժբաժը պատրաստ ուտող մակդիրները, անոնց, որոնք թողուցած են ամեն բան միմիայն յեղափոխութեան համար, գործելու, քարոզելու համար. ան նց, որոնք ինքզինքնին մաշեցուցած էին ծրագրի մը շինելու գործ մը բստեղծելու համար... Եւ այս ամենը իրր թէ ժողովրդի սիրոյն համար... Երբ անձ մը իր եսականութեան յագուրդ տալու համար կը մըտէ, կը անուանարկէ մաքուր ու անարատ միմուռութեամբ. երբ կը թուանորէ մաստիպուի կոյս սիրտերը. երբ անձ մը կամ ժողովուրդ մը իր անցեալի սրտաշնոր արդ ռացնելու համար կը զիմէ անբարոյական միջոցներու. ազնիւ ու ընտրուած դասակարգը, այս-

ինքն ճշմարիտ յեղափոխականը սըրտի կատարեալ հանդատութիւնով առանց յուզումի, առանց դիտումի եւ առանց ուրիշ պատասխանատուութեան անոնց սեւցած երեսին թուր պիտի նետէ. վաճախով զանոնք հատարակական ասպարէզէն...

Նախորդ տանամեակի մէջ ունեցանք շատ մը խոչնդոտներ, ներկան բոլորովին փոխուած է. իրանձարութի մէջ օրօրու զ մտնու կը այսօր լաւ կիմանայ կարող. անձ ուր, մանաւանդ եսը մոռցող գործիչներու պէտքը. եթէ ինքզինքն օրօրու ինքն կայրութիւններ կործանուել են յետը եղած է զանաւոր կործանողը եւ եթէ խորապէս քննենք նախկին կազմակերպութիւններու կործանման բուն եւ որոշ պատճառները ուրիշ բան չէ եղած. եթէ ոչ եւակնութիւն եւ կամայականութիւն, Բայց նախկին ժամանակներ անցած են. ժողովուրդը սկսեալ ամենախոնարհ մակարդակ ունցող անհասէն մինչեւ համարաբարական սեղաններէ ընթացաւ արտը գիտէ պատուել, յորդեղ եւ աւելին պաշտել իր «Գործիչը» եւ ատոր հակառակ իրեն զէմ լմբատացողներուն պէտք եղած պատիժը արնորինել սեւ մուրը քսելով անոնց արդէն սեւցած եղանակ, օրինակները պակաս չեն. չը պէտք է բսել որ ժողովուրդը բան չըզգայ. մասեր, փորձառութիւն չունի. քիչ որ չեղան ըսողներ թէ յեղափոխականներ չօճու ինքն են. այո. Մասուախ մը սէտօրիստները չօճու ինքն են: Նոյն պէս պակաս չէ անոնց թիւը որ փորձիկ գործունէութիւնով, բազմի բերուածով բարձր աստիճանի են հասած եւ հիմակ Պատմաբան գաղաթէն ստղին անցին համաներ կարձակեն. այո, շատ զերին է ազբայց ճշմարիտ արհամարանքը գա-

նենք կը լինցնէ. եւ չը լուցողաց արդէն. պէտք չէ լսել որ այս մեծ է, այս փոքր, այս զարգացած է. այս ազէտ է, այս փորձառու, այս անփորձ. ամենամեծ մարդիկն որ մտրնեբու մէջ են ծնած:

Դասակարգ մը արհամարելը ոճիր է. մանաւանդ զոհող, զազափառ սմ, անկեղծ ու բտաբուականի փոխառու գասակարգ մը. արհամարումը երբ բոնաբարուած կը անտէ իր սըրբազան իրաւունքները, նա կը լուէ, բայց ժամանակի մը համար. քիչ յետոյ աւելի անկողորէն պայթելու համար. նա կը լուէ, բայց երբ պոթկաց. ան հարաբել է. փոթորիկ է. կը կործանէ. կը լափէ կաբէ ամեն բան եւ աւերակներու վրայ շատած առանց պատասխանատուութեան, որովհետեւ չունի. առանց խցի խայթի որովհետեւ. չը տանջուի, իր վերջացող կեանքով իր մոխրացած սակորներովը վերջապէս յաղթեցի կը գոչէ...

ԵՐԿԱԹ

ՈՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ

(«Բեփօրտի» քիւ 23)

(Շար. նախորդ քիւն եւ վերջ)

Համաձայնով Սուրբանի հետ ըէֆօրմիների համար եւ կամ բնորոշելու աւտարիական գրաւումը:

Դա էլ օգտակար քաղաքականութիւն է. Սուրբանը մերկացրել է իր ստրը եւ գոռում է. «չէք իր գեաւոր», իսկ գեաւոր գիպոմատական քանակցութիւններ պէտք է վարի ըէֆօրմիների համար: Իսկ համաձայնով Սուրբանի հետ. դա էլ միւրախառնի միտք է. կարծես եթէ Ա-

սարիան փափագելիս լինէր, մեզ պէտք է հորցանէր. արդեօք լինի Մակեդոնիա թէ մնայ Բոսնիա սեւ. մաններու մ-

Նպատաւոր թուէ՞:

Այո, նպատաւոր թուէ՞: Երբ կարգի տեղադրելու բարձրացրեց իր գրողը Սերբերի ազատութեան համար եւ առաջնորդեց Շեմսապետներին իր քաղական լծի դէմ, կը յայտնէ յեղափոխականները կոխ բաց արին ասն. կին. երբ Գարիբալդին իր «Նախորդ» շապիկեաններին հետ անցնում էր ստրուկ Իտալիայով եւ մարտի էր նրաւ խորում խալացիներին, երբէն կոպակին իրեց իր գրողը Սրէզիանու, իր յի բարձունքներին վրա եւ Բոսնիան ճեղքեց Գառնը դէպի Բոլցարի. երբ վերջապէս Կրկտագիրները կոնցին իրանց յետերի վրա... յոգ էր նր. պատաւոր թուէ՞. իսկ Մակեդոնացիներին յարմար թուէ՞ գեաւոր կայ՞:

Կազմակերպված մասսային յեղափոխութիւն:

Ինչ է նայ քորոզները կազմակերպված մասսային յեղափոխութեան համար. Որտեղ է կղել այդպիսի յեղափոխութիւն. Գիտե՞ք ազատի ազգերի պատմութիւնը եւ սխալ տեսնէք թէ ոչ մի սեղ չէ կղել կազմակերպված մասսային յեղափոխութիւնը—յեղափոխութիւնը յեղափոխութիւնը—յեղափոխութիւնը է Պարթաւի ֆրանսիացիներին զայրոյթի արատ. յատուկ, որը յետոյ ճարակեց ամբողջ Ֆրանսիան: Ամերիկացիներին ազատութիւնը անգլիական գերիշխանութիւնից միմէ՞. չէր ոչնչպէս մոզովրդի զայրոյթի պոթկում: Ինչ կանեան գերի ազգերի ազատութեամբ զարթում. մենք ոչ մի սեղ չէք աւելում այդ մեծ պրինցիպալներին ցոյց աւած կազմակերպված

ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա. ԳԼՈՒԽ Ե.

15

Չմբան մի ցուրտ ու պարզկայ երկու կոյ էր. Հեղինէն իր հօրաբորջ տանը, Մարիաի սենեակում, արմուկները լուսամտի գողին յեռած, ծնօտը երկու ձեռքի մէջ առած. հերարձակ, լուսամտից դիտում էր արծաթազօծ երկնակամարը. ժամը 7 1/2 էր. հիւրերի հաւաքվելու ժամանակը արդէն մոտենում էր. սերմն եւ մազիկեանը շուտով պէտք է գար. բայց Հեղինէն տրտում էր. նա մտածում էր իր առաւօտեան առած քայլի մասին. յանդուգն, սրտակարգ խոստովանութիւնը գործել էր իր հակազդեցութիւնը. կանացի գարեւոր սովորութիւնը ոտքի տակ աւել. համար ձակուրդի նման յաժմ նրան մի ոճիր էր երեւում կանացի անօթխածութեան եւ հպարտութեան դէմ:

—Ինչպէս կարող եմ ես կրկին հանգրիւնել մաղիկեանին. ո՞վ է իմանում նա հիմա ինչ կարծիք կազմեց իմ մասին. արդեօք այնքան բարձր է նա, որ ըմբռնի թէ իմ այդ քայլը միայն անսահման սիրոյ եւ անկեղծութեան արդիւնք է: Կինը պէտք է իր էրը թաղանթի. առաջին բացատրողը այր մարդը պէտք է լինի. ահա կնոջ բո-

տրկութեան ամենաառաջին նշաններից մին:

Եւ ես յանդգնեցի այդ օրէնք պարձած սովորութիւնը օտարակոխ անել. Ու զգում եմ, գատապարտելի եմ գանուում. ես անձամբ, նախապաշարու մը ջախջախել ուզողս. հապա եթէ ուրիշներն իմանան. ինչ կը լինի իմ վիճակը. ամեն կողմից քարկոծում... բայց ուրիշներ իմ փոխի չէ. Առաջին քարը ես եմ նետում իմ գլխին. Ինչու, որովհետեւ թոյլ աւելինձ սիրամած նրիտասայ զին յայտնել—որ սիրում եմ:

Բայց եթէ մաղիկեանը ան զնիւ լի չի. եթէ նա իմ խոստովանութիւնը իր տարած յաղթութիւնների շարքում զնիւ եւ իր բնկերների առջև պարծեանաւ նիւթ դարձնի. չէ, մաղիկեանը այդպէս վարվի. անընդունակ է:

Օխ, ինչ ուզում է թող լինի. մի բան յայտնի է որ այսօր ես պէտք է աշխատեմ իմ շատազ քայլը ուղղել. բայց ինչպէս. եթէ ուրիշ զիրք բունեմ, մաղիկեանը այդ կը վերադրի իր անորոշ պատասխանին:

Ով դու առաջին կին. ինչու նախնական ժամանակներում կորցրիր քո սրտի հետ ազատ կեկումով վարվելու ազատ իրաւունքը. ինչու դու հանդուրժեցիր այդ ստորութեանը եւ քեզ ընկեր ընտրելու իրաւունքը ամբողջովին աւելի այր մարդին. ու հասարակութիւնը դարբեր ընթացքում սրբագործեց այդ քո իրաւազրկումը եւ օրէնք շինեց:

Դրան իսկոցը ընդհատեց Հեղինէն մտածումները. իսկոցին հետեւեց Մարիաի ձայնը.

—Հեղինէ, դեռ չը հազնվեցիր. շատ արտ, մի քանի հիւրեր եկել են արդէն, որոնց թւում է եւ պարտն մաղիկեանը. քեզ են հարցնում:

—Ահա գալիս եմ. Մարիա. քիչ մնաց. եւ Հեղինէն սկսեց իր գործը ինքնիրեն խօսելով:

—Ինչ ուզում է թող լինի. սիրում եմ մաղիկեանին. անսահման սիրով. հաստատեցի եմ որ նա էլ ինձ է սիրում. ուրիշ պատճառներ ունի որ չի շտապում: Հիմա հազնվեմ կարծեմ կապոյտ զգեստ աւելի լաւ է. չը զիտում որ փխրութեան է աւել թէ մարդկային կեանքի մէջ շատ քիչ երջանիկ վայրկեաններ կան. եւ այդ վայրկեանները փոխարինում են բազմաթիւ վշտալի տարիներին:

Այսօր ինձ համար երջանիկ օր է. Այսօր է որ ես բացի իմ կուսական սխալը այն մարդի առջև. որը ինձ համար կեանքից էլ թանկ է. այսօր է որ ես պէտք է տիրապետեմ մաղիկեանի սրտին. եւ ահա իմ երջանիկութիւնը կատարել պիտի լինի. ինչ յիմար բան, բախտը իմ ստիպել է բերել այն էս կին. որի հետ ես կարող եմ երջանիկ լինել, եւ ես սպասեմ. թագնեմ իմ զգացմունքը, կեղծեմ եւ անտարբեր ձեւանում: Չէ:

Հեղինէն շտապով հազնվեց ու մի քանի վայրկեանից ուրախ, զարթ գնաց ընդունարանը ուր մի քանի հիւրերի հետ գանձում էր եւ մաղիկ-

եանը. Հիւրերին բարեկոյտ յիտոյ Հեղինէն սեղմեց մաղիկեանի ձեռքը հօրցնելով:

—Ինչպէս էք, պարոն մաղիկեան, մեր վերջին անսակցութիւնից յետոյ

—Շատ լաւ օրիորդ, ձեր երեսկայանից աւելի լաւ: Ձեր քաղաքի բերած յուրերը ինձ շատ ուրախարին Ամեն բան կատարվել է այնպէս ինչպէս ես կը ցանկայի ամբողջ էութեամբ:

Հեղինէն աչքերը կրակ տուին նա մի վայրկեան մաղիկեանի աստիճար իր խոստովանութեանը վերադրեց. Եւ համոզվելու համար այդ երթողութեան մէջ. շայտնակեց:

—Որեմն ես բարի լրտար եմ. պարոն մաղիկեան:

—Այո օրիորդ. սեւելի բարի քան դուք կարծում էք: Մասնաւոր լուրը ոչ ոք այնքան ճշմարտութեամբ չէր յայտնում որքան իմ կողմից:

—Որեմն, այսօր ուրախ ժամանակ կանցնենք:

—Ի հարկէ. ես այնքան ուրախ պէտք է լինեմ. որչափ շատ քիչ անգամ եմ եղած:

Մաղիկեանի վերջին խօսքերը Հեղինէն հանդեպին որ նրա ամբողջ խոստովանութիւնը իր խոստովանութեան շուրջն էր դառնում: Անկասկած էր որ իր սիրաւ մերթված չէ:

(Շարունակելի)

մասսային յեղափոխութիւնը : Ան-
րոյ, Յ. Եւնաստանի, Բ. Գրիգորիայի եւ
կրթաէի ազատութիւնները—սրանք
ամենափայլուն ապացոյցներ են :

Եւ այդ յեղափոխականները եթէ
լինէին մեր պրինցիպալներէ իւր
քով, այնտեղ դեռ պէտք է երազէին
ազատութիւն : Սակայն, բարեբախ-
տաբար, նրանք այլ խելքով են եղել
Միւս Գամ ազգային մասուն, ասը-
ված յեղափոխական ոգով, ծնել է
իր արգանցից կարապետներ, որոնք
առաջնորդել են նրան դէպի կոյն :

Եւ ո՞վ կարող է վիճել այսօր թէ
Մակեդոնո-Օքրինի բնակչութիւնը
չէ ապրում ինչո՞ւն այդ յեղ. ոչ ոք թէ
այնտեղ ազգային մասան մէջ չի ե-
ռում զարթոյթ թիւրական լծի դէմ եւ
ազատութեան ծարաւ : Յեղափոխա-
կան ն. խապարտութիւնը արդ-
եօք չէ հասել այնտեղ իր վերջի սահ-
մաններին : Արպի՛՛՛սի վարդապետու-
թիւններ պիտի քարոզեն այն տեղ
մեր օգնիչախառները եւ յեղափոխա-
կաններ :

Վարկիանները ճակատագրական
են :

Մակեդոնիան եւ Օքրինի շրջանը
այսօր կարծա չեն քաղաքականու-
թեան եւ քարոզի՛ ալլ գործի : Ազ-
գային զարթոյթը այնտեղ պետք կու-
ն է խիստ պայթիւններով, եւ, եթէ
մենք չըստպենք միացնել այդ պայ-
թիւնները մի ընդհանուր թիւրքի-
թիւնութեան դէմ, սոսկալի պիտի լի-
նի կատաւոյօքր. մասնակի պայ-
թիւնները պիտի խեղդուին թշնամու-
ութից, ազգային մասուն պիտի կոր-
ցնէ իր կարողութեան վրայ ունե-
ցած հասարակ, հասարակ դէպի յե-
ղափոխութիւնը, հասարակ դէպի զե-
կալարներ : — Եւ պիտի քիտի մի
մասսայի, որը լուս պիտի լինէ սարկու-
կական շղթաների շտինդր եւ նոյն-
պէս անվրդով պիտի համբերի իր մարմ-
նի վրայ ընկնող բռնակալի խարա-
պետի :

Մեր պատասխանատու թիւններ
են ձեռն աջօրիս Մակեդոնիան կան
շալման զեկալարներին : Երանք
կամ պիտի նեանին իրանց հայրենիքը
Հայաստանի (՝) դժբաղդ կացութեան
մէջ կամ պիտի խլին նրան բըռ-
նութեան ճարկից :

Փրկութիւնը սուրբ յեղափոխու-
թեան մէջ է :

Մակեդոնի, լեւներում այսօր գէն
ի ձեռն կրք հազարից աւելի գոր-
ծիչներ են համրվում : Աւրջ հազար-
ներ պարտաւ են թռչել դեռ առա-
ջին կողմից, Աւրջ հազարներ էլ՝ Մա-
կեդոն-Օքրինի կամքարայնից՝ սրի-
տաարող սպասուս են այդ կողմին,
այլ հազարները ազատ Բոլղարիայից
կը հանէին օգնութեան իրանց եղ-
բայրներին : Իսկ Պոլիսը տատանվում
է եռաշող դժգոհութիւնից, Ալբանի-
ան էլ պատել են յեղ. շարժումիւ-
րի ցնցող զգացումները, Եէսէնում
աւճիկ զինուորները կտարվում են
արար ապստամբներից, արարական
թերակզգին մոտչում է ...

(՝) Մ. Ս. — Գրեթօքրմիտի յօդուած-
գիրը շատ յոռուան է դէպի հայ ժո-
ղովրդի վիճակը. նրա գոյութիւնը
արդէն վերջացածի պէս է համարում
որով եւ շատ մեծ սխալ է գործուած
Հայերս նոյնքան յոյս ունենք մեր
ուժերի վրա որչափ Մակեդոնացի-
նորը :

Իր արկական կապանքները խոր
տակելու համար սլանից աւելի որ-
պիսի նպատակաւ որպէ՛ մեր հայրե-
նիքին :

Թ Վ Պ Ն
Էւրի Շղարշեանց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Աւրոյժ եւրոպական մասուլը ողող-
ուած է Հայաստանի դատին նուիր-
ուած համակրական առաջնորդնե-
րով, յօդուածներով եւ հետգիրնե-
րով :

«Մարտիֆոն»-ը Գեորգի-Յայտունց՝ էն
թարթմանարար յառաջ կը բերենք
հետեւեւ յ յամակները :

«Բրիւսէլ 17 յուլիս»

Եթէ Հայաստանի բարեկամներու
համագումարու մը Պէլճիգրական մայ-
րաքաղաքին մէջ տեղի կուենայ, ու-
նի իր պատճառը, այն է, —ինչպէս
կըրական «Մէտրոպոլ» կը շեշտէ—
Պէլճիգրակի եւ Թուրքիոյ մէջ սիրող
քաղաքական լարուած յարաբերու-
թիւնը : Ինչպէս ծանօթ է, Սուլ-
թան օրին մէկը պաշտօնազուրկ Բ-
րաւ կարա-Թէօտօրի էֆէնտին, որը
շատ սիրուած մարդ էր եւ հոս երկար
սանն պաշտօն վտարու իր տեղ իրեւ-
սէլի զեւպան անուանուցեալ Պարիզի
թուրք քաղաքական գործերու ներ-
կայացուցիչը՝ Միւրի Բէյ : Այս փո-
փոխութիւնը Լէօպոլա Բ. էն համա-
ձայնութիւն չը գտաւ, որովհետեւ
ան կը ցնկկար իր մայրաքաղաքին
մէջ ունենալ իր քաղաքական մասնաւոր
դեպքան մը : Ապօրին-Համիս Պէլճի-
գրական թարգմանի գրանկութիւնը չը
կատարեց, ուստի թագաւորին կա-
ռավարութիւնն ալ երբէք չը շաղ-
րութիւն չը գործուց Միւրի Բէյի
նախձգութիւններուն, որ սենն ճիգ
կը թափէր Հայոց բարեկամներու հա-
մագումարու մը Բրիւսէլի մէջ արդիւն
տալու համար : Բայց այս առաջին
անգամը թուեց զին չը վհատեցան
Սուլթանի գործակատարները : Այնք
չառ ստակ ունէին, անկասկած աւելի
չառ, քան համագումարու մը սարքը-
ները : Եւ որքա՛րեւ իրենց յաջողի-
ցաւ համագումար մը պատաստող-
ներուն դէմ միշտ նոր դժուարու-
թիւններ յարուցանել : Երբ անոնք
երէկ սլան մը վարձած էին, այսօր
յանկարծ սրածը իրենց տրամադրու-
թեան տակ չէր դուրսեր : Այս խողը
կրկնուցեալ, շատ անգամ էր, մին-
չեւ որ քաղաքագլուխ Փոն Եէրրիկ
միջամտելով ազատութեան այս երկրի
մէջ յա Տուրքի յարսին մէջ քաղա-
քային խորհրդարարներն դէմ համագու-
մարին համար տեղ մը պատրաստեց :

Սրահի դրան մտ, որի մուտքը
Եէրրիկան ուստիկան էր եւ հրդեհ-
չէջներ խտօրէն կը հսկէին, տես
նուեր են Սուլթանին լրտեսները :
Անձնուարութիւն մը գոցուած պա-
հարաններու մէջ հիւրերուն կը բաժ-
նէր թիւրի մը լճիւն, որով մէջ
ինչ որ յիկիօրիակս մը կը ջանար
թրքական նահանգներու վիճակը
լուսաւոր գոյններով նկարել եւ Հա-
յաստանի վիճակը բաւական գուհա-
ցուցիչ ցոյց ալ :

Սրահին մէջ հաւաքուած են մտա-
ւորապէս 150 անձներ, որոց մէջ կան
նաեւ տիկիներ եւ կաթօլիկ հոգեւո-
րականներ : Պարտուէի վապէվիջ
(Հապէն) եւ Տիկին Զէննիդա (Կո-

բէնհագի է) անուանուցան փոխ-նա-
խագահներ : Տիկին Սէվէրին զար-
գարուած ուրբ եւ մետաքսեայ զգես-
տով շրջապատուած է ինչպէս միշտ :
Հոս են ֆրանսական էլեպիստան ժո-
րէս, տր Պրէսանտէ, Վազլ, ասոնց
կողքին կը տեսնուին նաեւ Բէրնար
Լազար, հոյր Ֆրանսուա, արեւոր
ժօրու քով եւ վտարայայտութեամբ,
Կօրէնհագի թանգարանի տնօրէն
Շմիլ եւ ուրիշներ :

Մերակոյտի անդամ Հիլգօ որլահէ
կը նախագահէ մեծ համակրանք վա-
յելիւով :

Ան կը կարգալ համագումարի նը-
պատակներուն համակրող նամակներ,
որոնց թիւը հազարներու կը հասնի
թէեւ Փեթմաճի եւ Ա. սարիս մինչեւ
հիմա ներկայացուցիչներ են զիկս, թ-
բայց համակրողներու ցանկին մէջ
առաջին տեղը կը գրանեն :

Ետտ նախաձեռն գիտուններու եւ
գրողներու անունները կար հոն :
Մենք կը յիշենք Պատու Հայէ ներ-
կաներուն մէջ բաժանուելու համար
հոս հասած բրօշի րնիւրը, էջ կը
գտնուին մասնաւորապէ՛ Երուարդ
Բէրնար-Յոյրի գրութիւնները (Հայ
ժողովրդի տանջանքները եւ Երուարդ-
յի պարտականութիւնները), գրո-
թիւններ Պիէր Ալյարէն եւ պատկերա-
զարդ կաթօլիկական սգրի րէ գորս
եկած գիրք մը : «Լ'օրիսն է յո քրուս-
գուս 8 2 Վիկիլիսիալ Ե. Բ. Գր» :

Պիէր Ալյար խոսեցաւ զրական
փաստերով ի ճառ : Ան խոստացաւ
ջանալ կարելի եղածին շափ ամեն բա-
նի պատասխանատու Սուլթանին նա-
յել, բայց րնականարար երթալով
չառ ալ դերին չեղաւ սյգպէս վար-
ուել, երբեք կարելի թիւններ կան
հայկական արք յուճիւր համար,
բաւանա Ա) Հայ ժողովրդի ամբող-
ջական ջնջումով, Բ. Ռուսաստանի
հետ միացումը Գ) վարչական բա-
րեննորոգումներով :

Ռուսաստանի հետ միացումը մը
ճառախօսը հայ տանջուող ժողովրդին
համար րորեք մը չի տեսներ :

Ռուսներ հիմակուց գոչել են իրենց
մասին մէջ գտնուած բոլոր հայ զպ-
րոցները, կործանել բոլոր սկան
հաստատութիւնները եւ ճ չեր բաց ի
կրօնական թերթերէ զատ հայ լրագիր-
ները : Հայ տառած մը կըլէ Եգեր-
եբք թիւթը ճիւղերը կարէ, Ռուսը
կը կարէ արտաւոր, ուրեմն միակ
ճամբար մը կը մտայ, այն է, վար-
չական բարենորոգումը : Այն ձրա-
գիրը, որ Պիէր Ալյար պատրաստած
է, համագումարու մը կը քննէ աւելի
մտան :

Ֆրանսացի գիտունին իրական եւ
որոշ ատենախօսութիւնը գտաւ ժո-
ղովրդի կողմէ խիստ ջերմ ընդունելու-
թիւն :

Յետոյ խոսեցաւ Տիկին Սէվէրին,
որ յանուն լրագրութեան բողոքեց
այն լրագրատէրերու դէմ, որոնք
չարչիական նկատումներով արգելք
հանդիսացան, որ մտուել արժանա-
ւոր կերպով քննէր եւ նկարագրէր
հայկական սարսփները :

Համագումարին ծրագրին մէջ եր-
կու մասնաժողովներու անուանումը
առաջարկուած էր, ստալինը պիտի
խորհրդածէր ամեն երկիրներու մէջ
այլորդ հայաստաններու մէջ տեւողական
յարաբերութիւններ հաստատելու մա-
սին, միւսը միջոց պիտի գտնէր, ու-
րոնցմով կարելի ըլլար ամենէն լա-
կերպով ազգիցութիւն բանեցնել հա-
ստարակց կարծիքին, պարլամենտա-
ներու եւ կառավարութիւններու վը-

րայ : Ժօրէսի առաջարկութեամբ ու-
րոշուցեալ միայն մէկ մասնաժողով
կազմել, որը միեւնոյն ժամանակ իր
խորհրդածութեան առարկայ կը դար-
ձնէ երկու կետերն ալ : Մասնաժողո-
վը կը բաղկանայ Ֆրանսայի, Հոլլան-
սայի եւ Տանիմարքայի ներկայացու-
ցիչներէն : Պէլճիգրական անդամներն
են նախարար լը Ժէօն, հոյր Ֆրան-
ցիսկուս, Վանդերվէլք, Ֆի. րնէմօն
եւ ճերակոյտի անդամ Լաֆօնտէն :

II

Բրիւսէլ 18 յուլիս

Այսօր համագումարի սրահին մու-
քին առջեւ բաժնուցեալ համագումա-
րին անդամներուն ուղղուող կող մը
«Հայ յեղափոխական Միութեան»
կողմէ տր ողջամտօրէն ցաւալի ի-
րողութիւնները բացատրուելէ վերջ
կը յայտարարուէ, թէ երբ պետու-
թիւններու կողմանէ հայ ժողովրդին
ի նպատա քայլեր չառնուին, այն ա-
սան վիճիւնս ստիպուած պիտի ըլլայ
գրիմոյ բացարձակ յեղափոխական գոր-
ծունէութեան իր գոյութիւնը պաշտ-
պանելու համար :

Նստի սկզբին նախագահ ճերակու-
տական Հիլգօ տր Լահէ Պ. Կիլյարի
միջոցաւ կարգալ տուաւ ժօրժ կլէ-
ման սօնն եւ Երուարդ Բէրնար-
յան նամակներ, վերջինս կը յայտարարէ,
թէ յանուն Փեթմաճիական ընկերա-
առավարական կուսակցութեան ինք
առաջը կը համաձայնի Դողովին ա-
մեն որոշումներուն հետ (մեծ րնդու-
նելութիւն) Յետոյ կարգապետեցան եւ
միաձայն ընդունուցեան հետեւեալ ու-
րոշումները :

1) Պիտի կազմուի միջազգային առ-
ժամանակեայ կոմիտէ մը, որը յա-
րաբերութեան մէջ պիտի մտնէ բոլոր
երկիրներու մէջ եղող հայասէր ըն-
կերութիւններու հետ : Վերջիններս
պէտք է կազմակերպեն իրենց երկրի
մէջ ազգային կոմիտէ, որը կընարէ
միջազգային կոմիտէի մը համար միա-
յուռն անդամներ : (Պեթմաճիոյ առ-
ժամանակեայ կոմիտէի անդամ ընտ-
րուցեան պրօֆէսօր Փոն Պար (Գէօ-
թիլիգէն), անդամ Հասագի միջազգա-
յին դատարանին, պրօֆէսօր Վիկիլի-
Ֆէօրիէր (Բէրլին) եւ Երուարդ Բէր-
նարյան, աւստրիականին մէջ ընտ-
րուցան պարտուէի Փոն Սուլթանը եւ
Վիկտօր Ալյէր, Պէլճիգրականի մէջ
նախարար լը Ժէօն, ճերակոյտի ան-
դա եր Հիլգօ եւ Լաֆօնտէն :)

2) Բաղձանք կայ, առանց Թուրքիոյ
հոյսին ամբողջութիւնը վիստելու,
նոյն իսկ Թուրքիոյ շահերուն համար
յիշեցնել Երուարդի իր պարտականու-
թիւնը երբ, որոնք Բէրլինի զանազ-
րի Յարդ, յօդուածի մէջ ընդունուած
են : (Յարդ, յօդ. Բալձարային Դուրբ
պարտաւորութիւն կը ստանձնէ տե-
ղական պահանջներու համեմատ հա-
յերէ բնակուած գաւառներու մէջ
մայնել հարկա. որ բարենորոգումները
եւ հայերը պաշտպանել քրդերու ու
չէրքէզներու յարձակմանց դէմ : Դու-
րբ պարտաւոր է այս ուղղութեամբ
եղած քայլերու մասին որոշ ժամա-
նակներու մէջ պետութեանց հազար-
ղել անգեկութիւններ, որոնք կը հս-
կեն բարենորոգումներու գործադրման
վրայ :

Կոմիտէն կ'ստանձնէ այս յօդուածին
վերջնականապէս գործադրման համար
մեծ կռաւորով աշխատել կառավարու-
թիւններու մօտ, պարլամենտներու
եւ մամուլին մէջ :

3) Համագումարը գտնուեալութեամբ

Յեղակացած է, որ նորերս Ռուսիոյ և Ֆրանսայի կողմէ Հայաստանի մէջ հիւպատոսներու թիւերը բազմապատկուած են և կոչ կուզէ, որ միւս պետութիւններն ալ միեւնոյն ուղղութեամբ գործեն:

4) Համաժողովը կը ցանկայ, որ Եւրոպայի մասուր տարածէ Հայաստանի բարեկամներու կօմիտէին տալիք ապագայ տեղեկութիւնները. (Տիւրքիոյ Սէփերինի առաջարկով կորոշուի, որ յաջորդ համաժողովին տեղեկագիր մը պատրաստուի. որի մէջ կարելի ըլլայ տեսնել Եւրոպայի ամեն մեծ թերթի վերաբերման գէպի կօմիտէի տուած տեղեկութիւնները:

5) Որոշուած է ամեն տարի համաժողով մը սարքել, միայն թիւրքացի առաջնական կերպով կը մնայ Բրիւսէլ. Պիէր Կիլար բնորոշ է քարտուղար:

Օրուայ յիշատակութեան արժանի դէպքերն են Ժօրէի և ար Պրէսան սէի ճառերը: Ժօրէս կը շեշտէր. թէ ինք յանուն Ֆրանսայի բնկրկարական կուսակցութեան կը խօսի: Ան ըսաւ, որ սխալ է հերոսական մատուցել Սուլթանէն կաշառած մասէն զատ միայն կառավարութիւններու դէպի Հայաստանի մէջ կատարուած սոսկալի անգլոսթանց հանդէպ ցոյց տուած անտարբերութիւնը պատասխանատու բռնել. ժողովրդներն ալ այնքան յանցաւոր են, ինչքան կառավարութիւնները. որոնք անշուշտ պիտի շարժէին, եթէ հասարակաց կարծիքը անելի ուժեղ կերպով արտայայտուէր:

Հիմա վերջապէս ժողովուրդը սթափեր է, պարագաներուն հետ ծանօթացեր և ոյողեր գործել, ուստի ձեռք կը բերէ նաև աղջարդիւնք: Վերջը քաղաքականութեան անկարելի բան չինք պահանջը կը պահանջենք միայն, որ ինք խորհի և իրմէ ստեղծուած 61րդ յօդուածը գործադրէ:

Բարեբաղդաբար. կըսէ Ժօրէս, կարելի է հայ ժողովուրդը ազատել առանց միջազգային պատերազմի: Իրենց հայրենիքէն խլուած շատ ժողովուրդներ կան, որոնց ազատագրութեան համար աշխատելէ պէտք է հրաժարել մարդասիրական սկզբունքներ ի նկատի առնելով, զի այսպէս գործ մը համաշխարհային հրդեհ առաջ կը բերէր (հաստատու կը յիշեցնէ Լօրէնի հարցը.) Ժօրէս Հայկ. դատի մասին իր յոյսը կը դնէ ֆրանսական հանրապետութեան միջամտութեան վրայ:

Աւելի քիչ հետադարձ, իսկ գործերու հիմնական ծանօթութեամբ խօսեցաւ ար Պրէսանէ հայկական հարցի մասին: Ի տեղեկութիւն տուաւ այն քայլերու մասին, զորս ինք երեսփոխան իրեն կօչէր, կոսաւ ար Միւնիխ և Ռայքսթատի հետ Դէլիասէի մօտ ըրած է:

Ֆրանսական հիւպատոսի մը Մուշղրկուիլը ֆրանս. ներկայացուցիչներու Օսմ. պետութեան այն կողմերուն մէջ բազմապատկուելուն սկիզբն է: Դելիասէ պնդեր է, թէ ի նպատակ Հայկ. դատին բոլոր պետութեանց միտքան գործելը անկարելի է. բայց դա երբէք ալ կարելոր չէ. կրնա՞նք ինչորին մէջ ալ առանց Գերմանիոյ և Աւստրիայի ձեռք բերուած է յաջող արդիւնք: Երբ յօդուածը շատ նուազ պահանջ մըն է, Անշուշտ առանց մեծ պետութեանց վերահսկողութեան կարելի չէ գործ տեսնել. պէտք է անուանել կառավարիչ մը,

որը առանց Եւրոպայի հաւանութեան կարելի չըլլայ պաշտօնէն զրկել. Երբ շուտով ազգու գիտուններ ըլլան, այն ատեն դարձեալ պիտի լսուին ջարդերու լուրեր:

Վերջապէս քաղաքացիութիւն Ֆօն Ծէրրիկ համաժողովին յայտնեց իր համակրութիւնը և խորքեց իր տրոյր ներկայ կողմերէն, որ ի յիշատակ այս զուտ մարդկային պատասխանատուութեան և մարդասիրական զգացումներով առաջնորդուած համաժողովը Ծէրրիկեան ուստիկանութեան խորհրդարանի աստիճաններուն վրայ լուսանկարուի, որը-կըսէ նա-նուազ վտանգաւոր է. քան թրքականը: Այս առաջարկը սիրով ընդունուեցաւ: Պատկերին վրայ պիտի տեսնուին Ժօրէի և Վանդէրվելի կողքին Նախարարը Ժօն և Նոյն իսկ կղերներու կատարի փարատիչ Դէմբուն արժան պատիւ միտին որ հայ ֆրանցիակոսի կողքին:

Երկրիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վրէննայի Միսիթարեան միտքանութեան վանահայր Արսէն Այսոնեան հայրակոպտոս վախճաներ է յուրիս Տի գրչի բը: Միտքանութիւն մըն ընթերցողներուն կուսանք այդ հմուտ կրօնականի համարու կենսակրթագրականը:

— Վրէննայի տնայէ Ֆր. բրէսէա թերթը հանգուցեալ Այսոնեանի յիշատակին գրուած յօդուած մը հրատարակուած է:

— Պատրիարքը կրկին սկսեր է Պատրիարքարան ի նալ, ու իր պտշտօնը կատարել: Սակ յի իր կրթահրաժարականը ինչ արդիւնք ունեցաւ, այդ մասին ոչինչ յայտնի չէ:

— Վանայի ազգային երկուս վարժարաններու հոգաբարձութիւնը արձակեր է արքայի ուսուցչական մօրմինը, առանց ունէ պատճառարանութեան:

— Մաքսիմով պատրիարքին այցելի է. բայց ի՞նչու համար: Յայտնի չէ:

— Վանայի որբախնամի գանձապետ պ. Խ. Աննուորեան յայտարարութիւնով մը կուզէ հասարակութեան յայտնել որ ինք հրամարի: Այդ յայտարարութիւնը մեծ քնք տպագրեր, որովհետեւ հասարակութեան մէջ եղած տրտունջները պ. Աննուորեանի համար չեն, այլ ուրիշներու:

— Անցեալ շաբթուան տրաւուրքին մէջ ազտուած մը կար Ֆիլիպէի գաշնակցական ներուն հանդէպ: Երբ լորձիւնքը թափուած է Ֆիլիպէի մէջ կատարուող յաջող հանգանակութեան պատճառաւ:

Ազտուած յօդուածագիրը կուզէ համոզել որ գաշնակցականները Ֆիլիպէ վաճառական մը ձեռք են ստակ չը ապուս համար: Կիճանանք որ վաճառականը իր

թրքօթիլու թիւնը ազտու լիւրով մը յայտնած ըլլալուն համար միայն արժանացած է այն արժանի պատժին:

Պրաւունքի Գուրպէթ օղլու Հասան Եէֆըրի օգտուելով այդ առիթէն, թերթին թուրքերէն բաժնին մէջ հրաւեր կը կարգայ Մակեդոնացիներուն չր խորխուստի գաշնակցականները, ոտպեն որ անոնք միւս կուսակցութիւններուն հետ ազգէ վարուին են... քարոզներ!!!

Այդ նկարագրութիւնը Հ. Եէֆըրին ըրած է միայն միամիտ ամբողջ աշխարհի թոյ փշուր համար, իբր թէ ինք բան մը կը նշանակէ երկր. Բոցարձակ զէրօ մը ըլլալ և այդչափ աներես: Միայն Հ. Եէֆըրի Գուրպէթ օղլուն կրնայ ըլլալ:

Օր մըն ալ Հասան Եէֆըրին Ոսմանլի խմբագրութիւնը պիտի օգտուածան կանչէ... տեսնե՞ք օրը ե՞րբ պիտի գայ...:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուսիոյ և Աւստրիոյ առաջարկութեամբ Սուլթանը յանձնարուած մը կազմեր է Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու համար:

Այդ յանձնարարին նախագահն է Սայիտ փաշան:

— Ֆրանսական կառավարութիւնը կառավարիչ որ Մակեդոնիայի մէջ բարենորոգումներ մտցնելու համար գօրծէրան մը կազմուի Սէլանիքի մէջ:

— Բարձր. Գուրը և Սուլթանը շատ յուզուած են Մակեդոնիոյ մէջ պատահած իր բռնցումներով. կը վախնան որ փոթորիկ մը պայթի թուրքիոյ զլխուն:

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ հայկական նահանգներու մէջ շատ պաշտօններ, որոնք հաստատուած էին կատարածներէն վերջը, հայերը պաշտպանելու համար ապօրինութեանց զէմ. պիտի ջնջուին, որովհետեւ կառավարութիւնը միջոցներ չունի այդ պաշտօններուն թոշակները վճարել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Պուլկար կառավարութիւնը խոստացած է Սօֆիայի մակ գոնական Բ. Կօմիտէն ջնջել:

— Չինորական քլիպին մէջ Ֆրանսացի տիկինը ապտակոյ սպան արտաքուսեր է զինորականութենէ:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Առանց մեծ միջազգայնութեան կրթական զարգացման կը գոցուին:

Ի Տ Ա Լ Ի Ա

Ռուսիոյ գործակալութիւնը կը հաղորդէ թէ իտալական 5 պատերազմական նաւեր հասած են Թարսպուլ. թէ ի՞նչ նպատակով յայտնի չէ:

Ի Տ Ա Լ Ի Ա

«Փուռնալ տրօքնէ»-ի համեմատ իտալիոյ և Չոլիցերիոյ միջև եղած անհամաձայնութիւնը վերջացեր է:

ԱՆՁՆԱՊԱՆ ՄԵՌԵԱԼ

Ֆրանսայի նշանուոր վերասանդէն Ռենէ ար Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ և բարոյալից վէպին

13^{րդ} և 14^{րդ} թերթերը հրատարակուեցան:

Գրքը չաբար կրկու թերթ կը հրատարակուի և իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 տանթիմի: Ամբողջ գրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վանայի համար բաժնեկիւն 1 ֆր.: Ուրիշ քաղաքներու և արտասահմանի համար 1.20:

Վանայի գուր, Պուլկարիոյ և արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը զրկուին. փոթի ծախքը հրատարակին վրայ է: Դիմել հետևալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.

Գրքի փոխադէն նամակագրութիւնը կը ընդունուի:

ԹԱՏՐՈՆ „ՊՈՐԻՍ“

Հանի Բաւաֆօ
Ա մ ո ն ն ա յ ի ն շ ր ջ ա ն
օ Վ է Ս է Լ Օ
Հայ դերասնական յմբին
Վաղր ինչ զարբի զիշեր ժամը 9 ժ
պիտի ներկայացուի:

Ի ՆՊԱՍՏ

Խմբիս գերակատարներէն պ. Ե. Երամեան և պ. Լ. Եաքարեանի Առաջին անգամ ըլլալով

Կատարի միջոցով միթէ կը յայտնուի կամ

Ֆրանս. Բօրթուկէզ պատերազմին մէջ տեղի ունեցած դէպք մը պատմական թատերախաղ 9 արտեր ԵՐԳ ԵՒ ՊՍԵՐԲ

Պ. Գ. Յակոբեանի և Օր. Բոգայի կողմէ

Պ Ա Լ Ե Գ

Օրինոյ Բարաւսի իր իր 66

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ — Варна